# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Արարատի մարզի Սայաթ-Նովա համայնքում 2015թ-ի 1-ին կիսամյակի կատարված աշխատանքների վերաբերյալ 06.07.2015թ-ին տեղի ունեցավ ՀՀ Արարատի մարզի Սայաթ-Նովա համայնքի հանրային լսումները, որին մասնակցում էին գյուղապետարանի աշխատակիցները, ավագանու անդամները, դպրոցի տնօրենը և աշխատողները, համայնքի բնակիչները:

Համայնքի ղեկավարը ներկայացրեց հանրությանը 2015թ. 1-ին կիսամյակի բյուջեի եկամուտների և ծախսերի մասին:

ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

**Տարվա Ճշտված Պլան- 61 626 118 հհ դրամ, որից 13 541 218 հհ դրամ ֆոնդային բյուջե**

**Փաստացի հավաքագրվածը-23 761304,** որից հողի հարկի գումարը 1 718 213 դրամ պլանի համեմատ կազմում է 32.8 %, գույքահարկ փոխադրամիջոցներից 1 928 500 դրամ 59.3 %, գույքահարկ շինության համար 478 741 դրամ 58.5 %, տեղական տուրքերի մասով 360 000 դրամ 50.0%, հողի վարձակալության մասով 314 950 դրամ 48.9%, շինության վարձակալության մասով 662 300 դրամ 100%, տեղական վճարների մասով /աղբահանություն/ 56 500 հհ դրամ 23.5 %, : Դոտացիա 18 167 100 դրամ 100%,: պետ բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումներ /սուբվենցիա/ 75000 հհ դրամ:

ԾԱԽՍԵՐ

**Տարվա Ճշտված Պլան- 61 626 118 հհ դրամ, որից 13 541 218 հհ դրամ ֆոնդային բյուջե**

**Փաստացի ծախս -16 558 762 հհ դրամ, որից 287 000 հհ դրամը ֆոնդային բյուջեից:**

Աղբահանում- **762 960 հհ դրամ**

Կազմակերպված միջոցառումներ-**375 000 հհ դրամ**

Ռիսման վարձ /այլ նպաստ/ փոխանցվել է թվով 2 ուսանողների- **300 000 հհ դրամ**

Մահվան նպաստ 3 ընտանիքների – **105 000 հհ դրամ**

Դրամական օգնություն թվով 71 անապահով, զոհված ազատամարտիկների թվով 8 վիրավոր ազատամարտիկների թվով 4 և պատերազմի մասնակից վետերանների ընտանիքներին թվով 3 - **1 250 000 հհ դրամ**

Սպորտային նպաստ սպորտսմենների համար – **150 000 հհ դրամ**

Շահույթ չհետապնդող կազմակերպություններին նվիրատվություն- **140 000 հհ դրամ**

Այլ ծախսեր և աշխատավարձեր **-11 787 402 հհ դրամ**

Կանաչ տարածքների հիմնում և պահպանում- **515 000 հհ դրամ**

Կրթություն այլ դասին չպատկանող – **886 400 հհ դրամ**

Այլ մեքենաներ և սարքավորումներ – **87 000 հհ դրամ**

Նախագծահետզոտական ծախսեր – **200 000 հհ դրամ**

Համայնքի ողջ տարածքում կատարվում է կենտրոնացված աղբահանում շաբաթը մեկ անգամ, համայնքը գտնվում է նորմալ սանիտարական վիճակում:

Համայքի միջոցներով կառուցվել է գյուղի նոր մանկապարտեզը՝ հիմնական խնդիրներից մեկը, որը շահագործման կհանձնվի 2015թ-ին:

Համայնքի հիմնական խնդիրներից է նաև համայքի բնակչությանը խմելու ջրով ապահովելը, հանդիսությունների սրահի կառուցումը, դպրոցի կապիտալ վերանորոգումը:

Համայնքի ղեկավար Ռ. Ալավերդյան

39